ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

I SSN 1829-2763

# Ժողովուրդ

www.zhoghovurd.am

7 փետրվարի, շաբաթ, 2015
տպագրության է տարի

18
(938)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

## ՔԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻ Է ԿՈՐՑՐԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԸ 14 ՏԱՐՈՒՄ




## ԻՅԱ, ԻՐՈ՞Ք

ՀՀԿ վերնախավը, արձագանքելով ԲՀԿ առաջնորդ Գագիկ Ծառուկյանի հրավիրած խորհրդաժողովին, կարծես թե հակադարձելու այլ բան չի գտել եւ որոշել է կառչել ԲՀԿ առաջնորդի ելույթից: Այդ գործի համար ՀՀԿ-ն անգամ որոշել է գործի դնել իր «ծանր հրետանուն»՝ ԱԺ նախագահի Գալուստ Սահակյանին, որն էլ շտապել է Ծառուկյանի ելույթը գնահատել որպես «շատ բառերով բեռնած, դժվար ընթեռնելի մի նյութ, որի տրամաբանական կառուցվածքը կաղում էր, իսկ ներքին հակասություններն աղաղակող էին»: «Նման խայտառակ հակասությունները զվարճալի կլինեին, եթե այսքան անտրամաբանական չլինեին»,- եզրափակել է Գրիգորիչը:

Անկեղծ ասած՝ Գ. Ծառուկյանի ելույթն, իրոք, առանձնապես նոր ասելիք չէր պարունակում, սակայն որս՝ «ավելորդ

ների մեկի ժամանակ նշել եք, որ որեւէ մյուզիքլի շրջանակում կորսետով եւ զուգագուլպայով ներկայանալը Հայաստանում սխալ է ընկալվում: Ի՞նչ եք կարծում՝ սա հանդիսատեսի կրթվածության պաստեղծագործում եմ իմ սեփական բենդի հետ, որն ունի մեծ լսարան: Փորձը ցույց է տվել, որ Հայաստանում կա մի մասսա, որը սիրում եւ գնահատում է լատինոամերիկյան երգարվեստը:

տը բերել է, եւ ես ունեմ ընկերներ, ովքեր ամբողջովին ընկալում են ինձ: Ցավոք, իմ մտքերն ու երեւակայությունը կապ չունեն այս երկրի հետ: Ես ուղղակի սիրում եմ իմ Երեւանը...

աշխատակիցների հետ կապ չունեցող մի երիտասարդ, միջադեպը կասեցվել է թատրոնի անվտանգության աշխատակիցների կողմից: Այս միջադեպը որեւէ առնչություն չունի Անտոնիո Կոնսալեսի չկայացած համերգի հետ, եւ թատրոնի տնօրինությունը հայցում է հանդիսատեսի ներողամտությունը»,-ի պատասխան BRAVO.am-ի հարցմանը՝ հայտնել են Օպերային թատրոնից:

### ՀԱՅԵ՛Ր, ՄԻԱՑԵ՛Ք

# ԳՈՒՍԱՆ ՀԱՅԿԱԶՈՒՆԻՆ ԲՈԼՈՐԻՍ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆ Է ՊԵՏՔ

**Եթե գուսան Հայկազուն անունն ամենքին կարող է ծանոթ չլինել, ապա «Գետաշեն», «Պատերազմ ենք գնում», «Հայե՛ր, միացե՛ք», «Մոնթե Մելքոնյան», «Լավագույն տղերքը մենք ենք», «Հպա՛րտ գնացեք» եւ մի շարք այլ երգեր ամեն հայ էլ լսել է եւ ստացել հեղինակից փոխանցվող ազգային ոգու շունչը: Արցախյան պատերազմի մասնակից Գագիկ Նազարյանի երգերն Արցախի ազատագրման վկաներն են եղել: Նա, սակայն, այսքանով հանդերձ մշտապես խուսափել է իր մասին խոսելուց, զերծ է մնացել շոու-բիզնեսյան կոմերցիոն կանոններից:**



Ընդամենը մի քանի ամիս առաջ էր, երբ գուսանն իմացավ իր ծանր հիվանդության մասին, որի բուժման համար մեծ գումարներ են անհրաժեշտ: Այսօր ամեն երախտավոր հայ կարող է օգնել նրան. «Հայե՛ր, միացե՛ք» կարգախոսն ուղղված է այն ստեղծողի կյանքը փրկելուն:

Ազգագրական երգերի հայտնի կատարող Ներսիկ Իսպիրյանն առաջինն է եղել, ով կատարել է գուսան Հայկազունի «Պիտի գնանք վաղ թե ուշ» երգը: Նրա խոսքով՝ ամենակարեւորն այն է, որ գուսան Հայկազունն իր երգով ցույց է տալիս՝ ինքը պահանջատեր •է: «Նա չմոռացավ Արեւմտյան Հայաստանի Ավետյաց երկիր լինելու գաղափարախոսությունը, իսկ Արցախյան գոյամարտի ժամանակ ձեռքերը ծալած չնստեց, այլ իր պրվեստով կենդանացրեց, ոգեւորեց հերոսամարտի մասնակիցներին»,-«Ժողովուրդ»-ի հետ զրույցում նկատեց երգիչը:

Ժողովրդական երգչուհի Գոհար Հովհաննիսյանն էլ, անդրադառնալով գուսանի մարդ տեսակին, ընդգծեց, որ նա, ի տարբերություն թիթեռի կյանք ունեցող երգերի հեղինակների, երբեք չի «ցուցադրել ինքն իրեն»: «Գուսանի երգերն ինքս շատ եմ կատարել մեր զորամասերում եւ տեսել եմ, թե դրանք ինչ մեծ ուժ են տվել զինվորներին: Չէի ուզենա, որ մեկս մյուսիս կորցնելուց հետո նոր միայն իրար արժեքը հասկանայինք: Կորստի վախով եկե՛ք իրար ծառայենք»,- մեզ հետ զրույցում կոչ արեց Գ.Հովհաննիսյանը:

Երգիչ, երգահան ազատամարտիկ Դավիթ Ամալյանն էլ իր հերթին վկայեց, թե ինչ կարեւոր նշանակություն են ունեցել գուսանի երգերը հայոց բանակի ամեն անդամի համար. «Ես լավատեսորեն եմ տրամադրված եւ վստահ եմ, որ միասնական ուժերով օգնելու ենք գուսան Հայկազունին, որպեսզի նա ապաքինվի»,-մեզ հետ զրույցում ասաց Դ. Ամալյանը:

***Հ.Գ.-Գուսան Հայկազունի հեռախոսահամարն է +37498 565-997: Գագիկ Նազարյանի անունով «Անելիք» բանկում բացված է հետեւյալ հաշվեհամարը՝***

***AMD-11805003430500,***

***USD-11805003430501,***

***EUR-11805003430502,***

***RUR-11805003430503:***

*Նյութերը՝ ԱՆՆԱ ԲԱԲԱՋԱՆՅԱՆԻ*

## ԿԵՐԳԵՆ ՏՂԱՄԱՐԴԻԿ

Կանանց միջազգային օրվա առթիվ մարտի 9-ին Մոսկվայի Կրեմլի պետական պալատում կկայանա «Հայ տղամարդկանց շոու» խորագրով համերգային ծրագիր, որը կազմակերպում է «Euromusic entertainment»-ը: Մոսկվայում կայանալիք համերգին մասնակցելու են միայն տղամարդիկ, որոնք կկատարեն կանանց նվիրված երգեր: Մասնակիցների թվում են Արմենչիկը, Արման Հովհաննիսյանը, Միհրան Ծառուկյանը, Ռազմիկ Ամյանը, Մարտին Մկրտչյանը, Հայկոն եւ ուրիշներ:


ConverseBank

Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի նախագահի 27.01.2015թ. թիվ 1/38Ա որոշման համաձայն՝ «Կոնվերս Բանկ» փակ բաժնետիրական ընկերությանը թույլատրվել է ժամանակավորապես դադարեցնել բանկի «Մոսկովյան» մասնաճյուղի գործունեությունը մինչեւ 01.05.2015թ.-ը:


● *Այս տարվա ապրիլի 14-16-ը կայանալու է Լոնդոնի գրքի միջազգային տոնավաճառը, որտեղ Հայաստանի Հանրապետությունը ներկայացված է լինելու առանձին տաղավարով:*